



55. ԾԱՂՑԻ ՏԵՐԵՌ

ճաղցըպա՞մ չոլ տաշտի՞մ մեջ ճաղցայընութեն կէներ:

Աղվես էկավ, ճաղցի տիւռ վե ընցավ, գյնաց տիւռ, ճաղց-
պընին կանչեց. - ճաղցըպա՞ն, արի՛, տիւռ պա՞ց:

ճաղցըպան ասաց. - Աղվես ախաբեր, քիւ գոռծ ի՞նչ ա
ըստա՞:

Ասաց. - Ես տ'եղիմ քյե ախաբեր:

Ավուր մեկին գյել էկավ, էկավ կանչեց ճաղցայընին, ասաց.

- Տիւռ պա՞ց:

ճաղցըպան տիւռ էպա՞ց:

Աղվես ասաց. - Եսա մեր միջնեկ ախաբերն ա, կը ճանչը-
նա՞ս, էկե մե մըսաֆըր:

Ավուր մեկ մնաց, առծ էկավ: Էզար տըռան, աղվես էլավ,
տիւռն էպա՞ց:

Աղվես տաղցավ ճաղցայընին, ասաց. - Եսա մեծ ախ-
աբերն ա, աթոռք թալե՞ք, թը նըստի:

Աթոռք թալին, առծ նըստավ:

Առուժ էկավ, թառավ տանիս, աղվես էլավ տիւռ, ասաց. -
Մեզի ախաբեր մ' էկեր, կընդունե՞ք, պերենք տուն:

Առուժին ասաց. - Թիջըմ քյե սպասա՛, մենք մեր խոսք
էնենք մեկ:

Մտավ ճաղաց վե, խոսքեր էրին մեկ: Ասին, թը գա, եղի մե
մեծ ախաբեր:

Օրըմ մնաց, լապըզտրակ էկավ, էկավ տըռան կանչեց,
տիւռ չըպացին:

Լապղատրակ օր տեսավ ուր վերեն տիւր չըպացին, բհոաց,
ասաց. - Տըղե՞ք, հելե՞ք տիւս, ասքար էկան, էճան, տեսա:

Խապեց, էխան տիւս, որ էնոնք էլան տիւս, լապղատրակ
մտավ ճաղաց: Մըտավ ճաղաց, խասավ, եթալ, ճաղցի մուշթակ
պըռնեց ծեռ:

Էնեկէլ ախապղոներու սըռտներ ավիրավ, ասին. - Լապղատ-
րակ խըտ գալուն մուշթակ առավ, էնոր նիյաթ էն ա, օր մի տիւրս
էնա:

Աղվես ասաց. - Եսի մե տը թալա տիւս: Տըղե՞ք, ի՞նչըխ
էնենք:

Մարբն ասաց. - Տի յանք դավի, տեսնենք իիմ վի՞ր խասնի:

Էլան, գացին դավի: Յըմեն ախապղոներ խընդրաց գացին
կառավուրեն:

Կառավուրեն ասաց. - Հառաճին վլ՞ն ա էկեր ճաղաց:

Մարբն ասաց. - ճաղաց չըխու իմն ա:

Ասաց. - Օր քին ա, հե՞ր դավի կը տեսիս:

Ասաց. - Բերախտուրեն կէնեն:

Գյել ախապիր ասաց. - Խա՞, օղո՞րթ բերախտուրեն կէնեն:

Գյել ասաց. - Խա՞, բերախտուրեն կէնեն:

Տառցան, առուն կը խառցընեն, կասեն. - Առճ ախապեր,
օղո՞րթ, օր տիւ գացիր ճաղաց, վլ՞ն էր էնտեղ:

Առճ ասաց. - Օղորթ ա, ճաղաց հառաճին տիր մարբուն էր:

Տառցան, առութին խառցում էրին, ասին. - Առուժ ախապեր,
եսի օղո՞րթ ա, լապղատրըկուն ա, թե՞ խայունն ա:

Առուժ ասաց. - Օր դողրի կը խառցընին, լապղատրըկուն ա:

Կառավուրեն առութի վկավուրնով խասուց լապղատրըկուն:

Տառցան, էկան: Էկան ճաղաց: Տիւր պացին, մըտան իինե:

Առուժ ախապեր տառցավ, լապղատրըկուն ասաց. - Եսա
ճաղաց մըչ ծի, մըչ քյե յա, եսն եմ հեօյնուրեն էրե, քյե խասուցե:

Լապղատրակ ասաց. - Թ'էղնի, ճաղաց մըչ ծի, մըչ քյե կիս-
րար ա:

Առուժ ասաց. - Ապա մեր ախապղոնե՞ր:

Լապղատրակ ասաց. - Քյե տըվեր եմ, խո էնոնցն էլ չը՞ն
իտա:

Առուժ տառցավ, ասաց. - Էնոնք կիյան դավի կառավուրեն:

Արի՛ մեր ծեռնով տանք:

Լապրոգտրակ կասա. - Չէ, ես իմ ծեռնով չըմ իտա, կիյան՝ թ'իյան:

Առուժ ասաց. - Լապրոգտրակ ախաբեր, շատ վտանգ ա, մեխօք ա:

Ասաց. - Ես իմ ծեռնով չըխո չըմ իտա:

Լապրոգտրակ ու առուժ ախաբեր մնացին ճաղաց, եմեկել իրեք ախաբըներ գացին կառավութեն:

Գացին, ասին. - Լապրոգտրակ ու առուժ ճաղաց մեզի չըն իտար:

Կառավութեն ասաց. - Գացե՛ք, խո պըխո ընգեք հիրար:

Ելավ տիւս, առօն ասաց. - Իյանք ճաղաց, թե տըվին, չըխո տըվին, թե չըտըվին, նոր մենք մեր էնելիք տ' էնենք:

Գացին ճաղաց:

Առուժն ասաց. - Ախաբըներ, ի՞նչըխ էրիք:

Ասին. - Մենք գացինք, մեր խոսք չըլըսեցին, ասին՝ գացե՛ք, ինգե՛ք հիրար:

Առուժ ախաբեր ասաց. - Որ ընցկուն ա, էկե՛ք, նըստե՛ք, ինգյենք հիրար:

Նըստան:

Ասաց. - Ի՞նչըխ էնենք:

Առօն ասաց. - Պաֆանվենք:

Լապրոգտրակ ասաց. - Ես ծե զատ չըմ իտար:

Առօն ասաց. - Օր չըտաք, ես կիքամ կառավութեն էլման:

Լապրոգտրակ ասաց. - Ես քյե չըմ իտար, կիյաս, գյընա՛:

Ելավ, գյընաց: Գյընաց խասավ կառավութեն:

Կառավութեն կը խանցընա, կասա. - Քյե վո՞ն չըտըվի, իե՞ր չըն իտա:

Ասաց. - Լապրոգտրակ չըտա:

Ասաց. - Թհկլե՛ն ա՛ն, գյընա՛ խետ:

Առօն առավ թհկլեն, գյընա՛:

Գյընաց ճաղցի հականաձ, բոռաց, ասաց. - Խողածին ախաբեր, էլի՛ տիւս:

Մարթ էլավ տիւս:

Առօն ասաց. - Գյիտե՞ս ի՞նչըխ էնենք, օր մե խասի:

Ասաց. - Ի՞նչըխ էնենք:

Ասաց. - Պե՛ թհկլին դնենք քյու շըլվար վե, իյանք ճաղաց:

Խողածին թհւեն որեց ուր շըլվար վե, գացին: Մըտան
ճաղաց, նըստան:

Առձ ասաց. - Լապըզտրակ ախաբեր, մե պամփին տը տա՞ս:

Ասաց. - Ես չըմ իտա: Եւ իմ խուգիւ հախուն կը տամ:

Յիմցավ, օր թհւեն գի խողածնի շըլվար վե:

Առձ խառցընեց. - Դե՞ր չիւր մըկա չըր իտեր:

Լապըզտրակ ասաց. - Դեսօր իմ վերծնական էկեր ա:

Թհւեն խանին, թհոյին վերեն: Լապըզտրակ էնտեռ խեղ-
տեցին:

Դիր ճաղըցպընուրեն տըվին գյելուն:

Դիրիս խողածին, առձ ու առուժ գացին գանգատ: Խասան
կառավուրեն:

Կառավուրեն ասաց. - Գացե՞ք, խո պըխո ինգե՞ք հիրար:
Ելան տիւս:

Առձ ախաբեր ասաց. - Գյիտե՞ք ինչըխ էնենք, առնենք շը-
ներ, իյանք ճաղաց:

Գացին ճաղցի տիւտ, կանչեցին գյելուն, ասին. - Գյել ախ-
աբեր, տիւտ պաց:

Գյել տիւտ էպաց:

Առօճն ասաց. - Քիւ քյեֆին կը գա", քիւ քեֆ անո՞ւշ ա:

Շըներ թողին վերեն: Գյել խեղտըվակ: ճաղաց խասակ
առուժին, խողածնուն:

Են երկուս տառցան, դիրիս հիրար խետ դավի կը խեն:
Գացին կառավուրեն:

Խասուցին խողածնին:

Ասին. - Առուժին պա՞մ չըկա հինե, օր հառաճ ճաղաց մար-
թուն էր, մըկա խասակ խողածնուն:

Առուժ ախաբեր ասաց. - Զի չըտաս, չըմ թոնի արեվ առնի
վըր քիւ ճաղցին:

Ասաց. - Կը տամ, քիչ պան կը տամ, եղինք հիրարու շիրիգ:

Աղվես էկավ:

Էկավ, ասաց. - Ախապըներ, հելե՞ք տիւս: Մենք փախենք,
թե ես պոչ թալեցի, խափեցի շըներ, պոչ թալեցի դեն, շըներ գա-
ցին դեն, չըխո ճաղաց իմն ա: Թը չէ, ծի փայ չըկա հինե, թ' եղնի
ծե: Օր թը ես խափեցի, չըխո տ' եղնի ծի:

Կելնին տէս: Կը փախեն, շըներ կը լարեն աղվըսու հետեվ: Աղվես ուր պոչ կը թալա, շըներ կիյան դեն, աղվես կը տառնա, գա, մըտի ճաղաց:

Եկավ, մըտավ ճաղաց:

Առուժ ախաբեր չըխո գյընաց: Մընացին խողածին ու աղվես: Շիրիս էն երկուս դավի կը խեն:

Մարթն ասաց. «Ես ի՞նչըխ էնեմ, աղվես էսա կիյաս մարթ կուրիսեց, մընացի ես, ես ի՞նչըխ էնեմ խընդ էսա աղվըսուն»:

Աղվես ասաց. - Երթանքյ կառավուրեն, յան ընծի կը խասնի, յան քյե:

Գացին կառավուրեն:

Կառավուրնի ծեռնով ճաղաց խասավ աղվըսուն: Ելան, էկան:

Խողածին ասաց. «Էսա իմ ճաղաց եղի խասի աղվըսուն»:

Ասաց. - Աղվես ախաբեր, ախըր ճաղաց քին ա, կիյաս, գյընաց:

Աղվես ախաբեր էլավ, էկավ ճաղաց:

Մարթն էլ առեց ուր շուն, գյընաց:

Գյընաց տըռան, կանչեց, ասեց. - Ելի, տէւր պա՛ց, քյե ախաբեր մ'ա էկե:

Աղվես տէւր կը պանա, ախապըրներ կիյան ներս, տէւր կը տընեն վերեն:

Խողածին շուն կը խանա, կը կանուցա էնտեղ, կասա. - Աղվես ախաբեր, կը խի՞ս, էսի քիւ ճոչ ախաբերն ա, քիւ ջան հապովն ա էկե:

Աղվես կասա. - Տէւ գյիտես:

Կը թոնա վերեն, կը խըղտի: ճաղաց մընաց մարթուն:

